ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 21 >> Օգոստոսի 2010թ N 80
Ք. Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԸՆՏԱՆԻՔԻ, ԿԱՆԱՆՑ ԵՎ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունիսի 10-ի թիվ 718-Ն որոշման 6)-րդ կետով, << Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով և հիմք ընդունելով ՀՀ տարածքային կառավարման նախարարի 2010 թվականի հուլիսի 14-ի թիվ 07-Ն և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2010 թվականի հուլիսի 13-ի թիվ 66-Ն <<Հայաստանի Հանրապետության մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի օրինակելի կանոնադրությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2005 թվականի նոյեմբերի 17-ի թիվ ԱՀ-19 և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2005 թվականի նոյեմբերի 17-ի թիվ 155-Ն համատեղ հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին>> համատեղ հրամանը.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի կանոնադրությունը (հավելված 1) :
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի 2006 թվականի հունվարի 19-ի թիվ 4 որոշումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ս.ԲԱԳՐԱՏՅԱՆ